## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>>ՓԲԸ, որը գտնվում է ք. Գյումրի,Մանուշյան 8 հասցեում, ստորև ներկայացնում է ԳՍՎԿ-17/2-2-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգի արդյունքում 2017 թվականի մարտի 3-ին կնքված պայմանագրում 2017 նոյեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ.** Պայմանագրով նախատեսված ապրանքների քանակի լրացուցիչ գնում, որի գինը չի գերազանցում սկզբնական գնման պայմանագրի գնի 20 տոկոսը:

**Փոփոխության նկարագրություն**. Պայմանագրի 4.1 կետում ամրագրված գնին ավելացվել է 1125/մեկ հազար հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ:

**Փոփոխության հիմնավորում**. Գնումների մասին ՀՀ օրենք :

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Բադիշյանին:

Հեռախոս՝ 0312 3-02-02:

Էլ. Փոստ՝ hospital@samariter.am

Պատվիրատու՝ Գյումրու <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>>ՓԲԸ

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1**
**03.03.2017թ. կնքված N ԳՍՎԿ-17/2-2-ԾՀԱՊՁԲ-15/4 գնման պայմանագրի**
**շրջանակներում փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ**

ք. Գյումրի ,, 20,, նոյեմբերի 2017թ.

Գյումրու <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վ.Նեգաձեի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և << Նատալի Ֆարմ >> ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն՝ Ա.Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 03.03.2017թ. կնքված N ԳՍՎԿ-17/2-2-ԾՀԱՊՁԲ-15/4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. *Համաձայնագրի առարկան***

Հետագա համագործակցության նպատակով, հիմք ընդունելով Գնորդի կարիքը կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով սահմանված քանակները ավելացնել՝ դրան համապատասխան ավելացնելով պայմանագրի գինը, ապրանքի միավորի գները թողնելով անփոփոխ:

1.2 Սահմանել պայմանագրի ավելացվող մասի քանակը և գումարը համաձայն աղյուսակի.

| Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը ՀՀ դրամով | Ավելացվող քանակը | Ընդամենը/հազ.ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| Դեքսամեթազոն սրվ. 4մգ/մլ 1մլ | հատ | 75 | 15 | 1125 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 1125/ ՀՀ դրամ |

1.3 Սույն Աղյուսակում չնշված, սակայն պայմանագրով սահմանված մնացած բոլոր բնութագրերը մնում են անփոփոխ:

**2. *Այլ պայմաններ***

2.1 Սույն համաձայանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

***3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

**ԳՆՈՐԴ**

Գյումրու <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> ՓԲԸ
Ք.Գյումրի, Մանուշյան 8
«Արդշինբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
Հ/Հ 2478918001680010
ՀՎՀՀ 05500936
Տնօրեն՝ Վ.Նեգաձե

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
Ք. Երևան, Պ.Տիչինայի 3-րդ նրբ.2/2
ՀՎՀՀ 01222567
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
natalipharm@bk.ru
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

(ստորագրություն)
Կ.Տ